ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Սահակյան,

Ջերմորեն շնորհավորում եմ Արցախի ողջ ժողովրդին՝ Ղարաբաղի պետական անկախության մասին հանրաքվեի եւ ԼՂՀ Սահմանադրության օրվա առիթով:

Սահմանադրությունը ոչ միայն պետականության վկայագիրն է, այլեւ կենսագոյի հիմնարար արժեքների շուրջ հասարակական համաձայնության վկայությունը: Իսկ այդ արժեքներն Արցախում դարավոր ու ամուր արմատներ ունեն եւ երաշխիքն են պետականության կայացման հետագա հաջողությունների:

Արցախի մեծագույն առավելությունն այն է, որ երկրում Սահմանադրության հետ մեկտեղ առկա է նաեւ սահմանադրականության անհրաժեշտ միջավայր, սահմանադրական մշակույթի եւ սահմանադրական բարոյականության ցանկալի մակարդակ, ինչը պետք է սրբությամբ պահպանել:

Արցախի հերոս ժողովուրդն արժանի է ունենալ այնպիսի սահմանադրական կարգ, որի առանցքը մարդն է ու նրա արժանապատվությունը՝ որպես անօտարելի ու բարձրագույն արժեք:

Նորանոր հաջողություններ եմ մաղթում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը պետականաշինության եւ երկրում կայուն խաղաղության հաստատման գործում:

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

10 դեկտեմբերի 2014թ.

0019, Երևան, Բաղրամյան 10, հեռ. (374. 10) 52 67 64 (ֆաքս), E-mail: armlaw@concourt.am